ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԷՍ-2019/26, 21.02.2019թ.

Բողոք բերող անձ՝ «Թրաք Սերվիս» ՍՊԸ

Պատվիրատու ՀՀ պաշտպանության նախարարություն

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ

Գնման առարկա Բեռնատարների վերանորոգման ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

Դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության գնահատող հանձնաժողովի 2019թ. փետրվարի 8-ի թիվ 3 արձանագրությունը, և պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդում վեցերորդ չափաբաժնի մասով որպես հաղթող ճանաչել «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ին՝ կնքելով համապատասխան պայմանագիր կամ պայմանագրեր:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն

օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Մարմին	Գնումների բողոքարկման խորհուրդ
Բողոք ներկայացնող սուբյեկտ՝	«Թրաք Սերվիս» ՍՊԸ /հասցե՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա,Անդրանիկի 63, 31/
Պատվիրատու	ՀՀԿԱ-ՊԵԿ /ք. Երևան, Մ. Խորենացի 3/
Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիր և առարկա	ՀՀ ՊՆ-ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2/ բեռնատարների վերանորոգման ծառայություններ
Լիազորված անձ	Լիազորված անձ՝ Արման Գագիկի Սարգսյան ՀՀ փաստաբանների պալատի անդամ, արտոնագիր թիվ 1085 տրված 16.10.2010թ. հասցե՝ ՀՀ ք.Երևան, Կոմիտաս 34շ., 37բն. 095310031 truck.service@inbox.ru

Բողոք

Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 3 արձանագրության դեմ

ՀՀ Պաշտպանության նախարարությունը 2019թ.-ի հունվար ամսին հայտարարել է ՀՀ ՊՆ-ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2/ ծածկագրով էլեկտրոնային աճուրդ բեռնատարների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման՝ յոթ չափաբաժիններով: «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ն 6 չափաբաժնով մասնակցել է ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից հայտարարված ՀՀ ՊՆ-ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2/ ծածկագրով էլեկտրոնային աճուրդին՝ ներկայացնելով ՀՀ օրենսդրությամբ և հրավերով պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Էլեկտրոնային աճուրդի մասնակցության պայմանները սահմանված են հանձնաժողովի 2019 թվականի հունվարի 09-ի թիվ 1 որոշմամբ: Տվյալ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՈՒՏՔ N 7279.19
«21» 02 2019թ.

փաստաթղթով՝ ի թիվս այլ չափանիշների, նախատեսված է ներկայացված գների գերազանցման չափանիշը, որը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Աճուրդի բոլոր չափաբաժինների արդյունքն ամփոփելու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են ըստ յուրաքանչյուր չափաբաժնի համար սույն ընթացակարգի շրջանակներում գնվելիք ծառայությունների համար գնման հայտով սահմանված գները, գնման ընթացակարգի տվյալ չափաբաժինը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, հայտարարվում է չեղարկված:

«Թրաք Սերվիս» ՍՊԸ-ն կողմից ներկայացված հայտի ուսումնասիրության արդյունքներով հայտարկված վեցերորդ չափաբաժնով հայտը մերժվել է, այն հիմքով, որ մասնակցի այս դեպքում «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ի առաջարկը գերազանցել է տվյալ տողի համար սահմանված նախահաշվային գինը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը գնահատող հանձնաժողովի որոշմամբ հայտարարվել է չկայացած:

«Թրաք Սերվիս» ՍՊԸ-ն գտնում է, որ ՀՀ Պաշտպանության նախարարության գնահատող հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 3 արձանագրությունը անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

«Թրաք Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը չի գերազանցել տվյալ տողի համար նախատեսված նախահաշվային գինը: Համաձայն Գնման ժամանակացույցի և տեխնիկական բնութագրի 6-րդ չափաբաժնի համար նախատեսված նախահաշվային գինը ՀԻՆՈ-700 իր կիսակցորդով սահմանվել է 85 958 103 ՀՀ դրամ: Մինչդեռ, 50111220/523 բեռնատարների վերանորոգման ծառայությունների 6-րդ չափաբաժնի ՀԻՆՈ-700 իր կիսակցորդով ավտոմոբիլների նորոգման աշխատանքների, պահեստամասերի և Կ. Ք. Նյութերի անվանացակով նախատեսված տողերի հանրագումարը կազմում է 110 583 553 ՀՀ դրամ: «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ի կողմի ներկայացվել է 110 500 000 ՀՀ դրամ գնային առաջարկ, որ նույնիսկ մի փոքր ավելի նվազ է, քան նախատեսված նախահաշվայի գինը:

Տվյալ դեպքում տեղի է ունեցել "Գնումների մասին" ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, որի համաձայն «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, *դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝* բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը...»: Քննարկվող բառակապակցության սահմանումը ունի ոչ թե ձևական, այլ առարկայական նշանակությունը, քանի որ այն ուղղակիորեն կարող է արգելափակել այս կամ այն մասնակցի հնարավորությունը գնման գործընթացի արդյունքներով ճանաչվել որպես հաղթող:

Տեղի ունեցած անորոշությունը խախտում է նաև իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքը, որը հանդիսանում է ՀՀ իրավական համակարգի կենսունակությունն ապահովող տարրերից մեկը: Իրավական որոշակիության սկզբունքը պահանջում է, որ իրավանորմերը իրենց բովանդակությամբ լինեն հստակ, տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք չտան և իրենց իրավական հետևանքների առումով լինեն կանխատեսելի: Իրավական որոշակիության սկզբունքի պատշաճ իրացումը հատկապես կարևոր է իրավական պետության պայմաններում, որպիսին ըստ ՀՀ սահմանադրության հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը:

Թիվ ՀՀ ՊՆ-ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2/ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքներով խախտվել է նաև "Գնումների մասին" ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը, որը գնման գործընթացը կազմակերպողից պահանջում է հետևյալը.

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

ՀՀ օրենսդիրը վերը նշված չափանիշները սահմանելով, անշուշտ, նպատակ է ունեցել բացառել գնման գործընթացում խտրական պայմանների սահմանումը, արհեստական խոչընդոտների ստեղծումը և մասնակիցներին անհիմն պարտականություններով ծանրաբեռնումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Գնումների բողոքարկման խորհրդից խնդրում ենք ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ վերջինիս վերապահված լիազորություններով դադարեցնելու ՀՀ Պաշտպանության նախարարության գնահատող հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 3 արձանագրությունը, և պարտավորեցնել ՀՀ Պաշտպանության նախարարության Թիվ ՀՀ ՊՆ-ՆՏԱԴ-ԷԱՃՕՁԲ-4/2/ ծածկագրով էլեկտրոնային աճուրդում վեցերորդ չափաբաժնով որպես հաղթող ճանաչել «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ին՝ կնքելով համապատասխան պայմանագիր կամ պայմանագրեր:

Կից ներկայացվում է՝

1. Բողոքարկման վճարի անդորրագրի բնօրինակ,
2. Էլեկտրոնային կրիչ, որը պարունակում է 50111220/523 բեռնատարների վերանորոգման ծառայությունների 6-րդ չափաբաժնի ՀԻՆՈ-700 իր կիսակցորդով ավտոմեքենայի նորոգման աշխատանքների, պահեստամասերի և Վ. Ք. Նյութերի անվանացակը
3. Գնման ժամանակացույցի և տեխնիկական բնութագրի բնօրինակ
4. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃՕՁԲ-4/2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագարություն № 3
5. Փոստային առաքումների անդորրագրի բնօրինակներ:

«Թրաք Սերվիս» ՍՊԸ

տնօրեն՝ _____ Հայկ Ալեքսանյան

21.02.2019թ.